


18689/  
100

Ծ. ԹՈՐԳՈՄՅԱՆ

# ԲԼՈՒՄ ԶՈՒՐԲԵ



ՀԱՅԻԵՏՀՐԱՍ  
ԹԵՐԵՎԱՆ  
1940

Օ  
48043

891.99.5  
թ - 81

30 MAY 2014/արք

Ծ. ԹՈՐԳՈՎՅԱՆ

# ԲԼԴԱՆ ԶՈՒՐԾ

Փորագրությունները  
փայտի վրա  
Յկ. Ռ. Թեղրոսյանի

Z U S T E S Z R U S  
ZL486Մ 44 ԿԻՑ ՄԱՆԿԱԿԱՆԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1940



Государственный  
музей истории  
БОВФ  
им. В. И. Ленина

(19799)  
Ч8.



20820-59

Ц. ТОРГОМЯН  
Источник Блдан  
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.



Ման ջնուր, Բլդան ջնուր...  
Այս անունով կոչվող ջուրն  
ինձ շատ եր հետաքրքրում և  
յես ուզում եյի անպայման  
տեսնել այն։  
Մենք ճամբար ընկանք դե-  
պի Բլդան ջուրը։  
Ինձ ուզեկցում եր իմ վաղեմի ծանոթ  
Դիլիջանցի Պետրոս բիծան։  
Հին վորսորդ եր Պետրոս բիծան և ի-  
րենց շրջանի լեռներին ու անտառներին  
քաջ ծանոթ։  
Թեև նա արդեն յոթանասուն ամառ  
եր բոլորեր, բայց դեռ կայտառ եր և կեն-  
սուրախ։ Ճանապարհին նա շարունակ կա-  
տակում եր և առակներ պատմում։

Նրա դեմքից ժպիտն անպակաս եր։  
Կարծես թե արևի պայծառ շողերը և կյան-  
քի ժպիտը միշտ փայլում եյին նրա վրա։

Յես յերբեք չեմ մոռանում նրա կեն-  
սուրախ ծիծաղը և սրամիտ կատակները։

Առավոտ եր։ Անտառածածկ ձորում  
փչում եր զովաշունչ հովիկը։ Ներքեռում  
խշաշլով անցնում եր գետակը։ Իսկ վերե-  
վից՝ ժպտում եր կապույտ յերկինքը։

Ահա մենք շեղվեցինք դեպի աջ և  
մտանք գեղատեսիլ հովիտը։ Շուտով մեզ  
դիմավորեց շքեղ անտառը և նեղ ճանա-  
պարհով առաջ անցանք։ Յերկու կողմից  
մեզ շրջապատում եյին բարձրահասակ,  
գեղեցկատես ծառերը։ Նրանք իրենց կա-  
նաչ թներն արձակել եյին վերև և կանգ-  
նել կարծես միմյանց թևանցուկ արած։

Լոռություն և խաղաղություն եր տի-  
րում անտառում։

Յերբեմն-յերբեմն նրա խորքում ծղըր-  
տում եր ինչ վոր թուչուն։ Յերբեմն թըռ-  
չունը մոտ եր գալիս, ապա կրկին հեռա-  
նում։ Ու յերբեք չեյիր կարողանում միշտ  
վորոշել նրա տեղը։

Մենք լուռ եյինք։ Պետրոս բիծան  
քայլում եր անխոս և կարծես վախենում

Եր խանգարել մեզ շրջապատող խորհրդա-  
վոր լոռությունը։

Վորքան լավ ե անտառը, նրա խաղա-  
ղությունը, նրա կանաչափառ պատկերը։  
Ծառերի շուրջը առատորեն բուսել եյին  
թփուտներ և փարթամ խոտ, իսկ նրանց  
արանքում՝ ժպտում եյին զանազան գույ-  
նի ծաղիկները։

Շուտով մենք դուրս յեկանք անտա-  
ռից և իջանք հովիտ։ Քարերի արանքից  
անուշ կարկաչով հոսում եր վտակը։ Զրի  
յեղերքով բարձրացանք նրա հոսանքն ի  
վեր։ Բավական գնացինք և, հանկարծ,  
Պետրոս բիծան աշխուժությամբ ցատկեց  
ջրի մեջ թաղված քարերի վրա յեվ բացա-  
կանչեց։

— Ահա Բլդան ջուրը...

Յես շտապեցի համել Պետրոս բիծա-  
յին և իմ առաջ պատկերվեց վոսկեգույն  
մի փոքրիկ ավազան, վորի խորքից դուրս  
եր ցայտում և բլբում մի աղբյուր։

Մեղմ ու քաղցր ձայնով նա շարու-  
նակ յերգում եր և կարող եյիր միշտ ա-  
կանջ դնել այդ հաճելի յերաժշությանը  
և չձանձրանալ...

— Հիանալի ջուր ունի այս աղբյուրը,

առողջարար, մարսական։ Խմելուց չես  
կշտանում։ Վորքան խմես՝ ելի ծարավ ես  
զգում։ Զարմանալի ջուր ե, — գովաբանում  
եր Պետրոս բիձան։

Եես կոացա և խմեցի այդ ջրից, թեև  
թթվաշ համ ուներ, բայց դուրեկան եր,  
ախորժելի։

Պետրոս բիձան ել մեծ ախորժակով  
խմեց և, սրբելով բեղերն, ասաց.

— Ուխայ... թող միշտ եսպես գլողա  
և անուշ ձենդ անսպառ լինի...


Մենք նստեցինք աղբյուրի քարե պատ-  
վանդանին և հանգստացանք։

— Ինչո՞ւ ես աղբյուրը Բլդան ջուր ե  
կոչվում, — հարցրի յես հետաքրքրությամբ։

Պետրոս բիձան հազար, հենվեց ձեռ-  
նափայտին և պատմեց.

— Դրա մասին մեր շրջանի ժողովուր-  
դը մի քանի տեսակ բան ե պատմում։

«Մինն ասում ե, վոր իբր ես ջուրը  
գալիս ե են բարձր սարի խորքից (բիձան  
ձեռքով ցույց տվեց կանաչագեղ հովտի  
վերևում կանգնած բարձր լեռ), վոր իբր  
են աժդահա սարի տակ ծով կա, իսկ եղ ծո-  
վում ահազին գեվեր ու չարքեր են ապ-  
րում ու լող տալիս, իբր սարը կապել ե



ծովի ճամբեն, չի թողնում, վոր դուրս  
գա. Մենակ մի նեղ բերան ե մնացել բաց  
և ես փոքրիկ ջուրը բլբլալով, զլգլալով  
գալիս ե ու լույս աշխարհին իմաց տա-  
լիս դեվերի ու չարքերի ճվճվոցը...

«Մի ուրիշն ել պատմում ե, վոր իբր  
մեզանից շատ տարիներ առաջ Դիլիջանի  
ձորում մի կալվածատեր, աղա մարդ ե  
ապրել: Եղ աղան մեր շրջանի ծանր լուծն  
ե յեղել, ենքան տանջել ու տրորել ե գյու-  
ղացուն: Նա ես մոտիկ գյուղից, Պողոս-  
քիլսից, տասնվեց տարեկան մի շատ սի-  
րուն աղջիկ ե փախցրել, իբր եղ աղջիկն  
ուրիշ տղի յեր սիրում: Աղան իր մարդ-  
կանց ձեռքով սպանել ե տվել եղ տղին  
և սիրուն աղջկան զոռով բերել ե ու դարձ-  
րել իրեն կին: Աղան յերեք անգամ մեծ  
ե լինում նրանից:

«Իբր աղջիկն եղ սարսափելի անար-  
դարությանը չի դիմացել, գիշերով փախել  
մտել ե ես ջուրը, և կարնան անձրեկ հե-  
ղեղը նրան տակովն ե արել:

«Եստեղ, Ջրի խորքում թագնված աղ-  
ջիկը մինչև եսոր ել լաց ե լինում և ա-  
նիծում ե են աշխարքի որենքները և են  
աշխարքի տեր՝ չար աղային... իբր աղջկա

աչքերից թափվող արտասուրքն ե, վոր  
հոնգուր-հոնգուր դուրս ե գալիս...

«Շատերն ել ասում են, վոր վոչ դե-  
կա սրա խորքում, վոչ աղջիկ, վոչ ել մի  
ուրիշ բան:

«Հենց ենպես, աղբյուր ե, իրեն հա-  
մար յերգում ե: Զուրը հոսում է յերկաթա-  
հանքի շերտերից, յերկաթի համն ու հոտը  
վերցրած գալիս ե ու քարի միջից բլբլա-  
լով, զլգլալով դուրս ե յենում...դրա հա-  
մար ել անունը դրել են բլբլան կամ Բլդան  
ջուր...

«Իմ կարճ խելքով վերջին ասածն ա-  
վելի ճիշտ ե, խելքի մոտիկ, եղպես ասող-  
ները գիտնական, ուսումնական մարդիկ  
են, աշխարքի չարն ու բարին տեսած-  
ապրած մարդիկ: Դրանց ասածն իհարկե  
ճիշտ կինի...»

Յես կրկին խմեցի աղբյուրի սառնո-  
րակ ջուրը և դարձյալ զգացի նրա կենա-  
րար ուժը.



Պատմվագիր՝  
Վեսպեր  
Տեխնմբագիր՝  
Ա. Գ. Գասպարյան  
Մրգագրիչ  
Մ. Թումանյան

---

Ցլավլիտի լիազոր՝ Բ—1153, Հրատ. 5249  
Պատմեր 388. Տիրաժ 3000  
Թուղթ 72×105, Տպ. ½ մամ.  
Մեկ մամուլում 15808 նշան  
Հանձնված և արտադրության 11/V 1940 թ.  
Ստորագրված և տպագրութ. 29/V 1940 թ.  
Հայպետհրատի տպ., Յերևան, Լենինի 65

---



ՀՀ Ազգային գրադարան



NL0396309

4ruC 70 407.

974

8746